Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 060 27 48 04, 060 27 48 05
fax 060 27 48 03
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 200 դրամ

154/7155/ 12 սեպտեմբերի 2024 հինգշաբթի

ISSN 1829-2224

Ա

## Շարունակում ենք նույն մանկամիտը մնալ

Չգիտեմ, պետք է արդյոք զայրանալ, թե պետք է պարզապես շատ-շատ տխրել, բայց փաստը մնում է փաստ՝ մեր քաղաքական միտքը շարունակում է մնալ տհաս երեխայի մակարդակին: Դա շատ տխուր է այն պատճառով, որ 2020 թվականից ի վեր ստացած բազմաթիվ հարվածներից հետո (չհաշված նախորդ պատմական փորձը) մենք, այնուամենայնիվ, շարունակում ենք ապրել պատրանքներով:

Ես չգիտեմ՝ արդյոք մեր քաղաքական ուժերի ներկայացուցիչներն ու նրանց համակրող փորձագետները իսկապե՞ս միամիտ են, թե՞ միտումնավոր են խաբում հասարակությանը, բայց, բոլոր դեպքերում, նրանց ինֆանտիլիզմն ուղղակի սահմաններ չունի: «Դիմենք միջազգային հանրությանը, որ այն ճնշում գործադրի Ադրբեջանի վրա և ապահովի արցախցիների՝ իրենց հողում ապրելու իրավունքը» թեզի նման՝ «աննախադեպ» միամտության դրսևորում է: Մի՞ թե դեպքերի նախորդ ընթացքը ցույց չի տվել, որ «միջազգային հանրությանն» այդ հարցը բացարձակապես չի հուզում:

Դա ամենևին չի նշանակում, որ համապատասխան օֆիսներում նստած են դաժան, անգութ և հայերի նկատմամբ ատելությամբ լցված մարդիկ: Դա այդպես չէ: Պարզապես քաղաքականության տեսակետից այդ ամենն անտեղի լիրիկա է: Քաղաքականությունը հիմնված է հաշվարկի վրա. կշեռքի մի նժարի վրա դրված են անտուն մնացած հազարավոր մարդկանց տառապանքները, մյուսի վրա Արցախում ռուսական ներկայության վերացումը: Եթե դուք նստած լինեք որևէ եվրոպական կամ ամերիկյան օֆիսում, ո՞ր նժարին եք գերապատվություն տալու: Եթե Արցախի հայաթափմամբ ռուսներն այնտեղից հեռանալու են, ինչո՞ւ պետք է Արևմուտքը դրան դեմ լիներ: Եվ արդյո՞ք հիմա Բրյուսելի, Վաշինգտոնի, ինչպես նաև, իհարկե, Մոսկվայի համար մեկ չի, թե ինչ ազգությամբ մարդիկ են Արցախում ապրում:

Նույն սերիայից է՝ «Արևմուտքը զսպում է Ադրբեջանին, որ վերջինս մեզ վրա չհարձակվի»: Ախր, ինչո՞ւ պետք է զսպի: Որովհետև մենք «ժողովրդավարական երկիր ենք» (իբր): Քանի՞ միլիարդի զենք է ԱՄՆ վաճառում, մեղմ ասած, ոչ ժողովրդավարական Սաուդյան Արաբիային: Կամ՝ մեր տարածաշրջանին ավելի անմիջականորեն առնչվող հարց՝ արդյո՞ք Միացյալ Նահանգները չի կարող օգնել Ուկրաինային այն ծավալով, որ այդ երկրի բանակը կարողանա դուրս շպրտել ՌԴ զինված ուժերն իր տարածքից:

Ի՞նչ անենք, որ վերջ տանք մանկամտությանը:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## «Հիմա օրենք ենք ընդունում: Առավոտյան հարցրեք. եթե մի քաղաքացի իմանա ինչի մասին է, ես ականջներս կկտրեմ»

### Սերգեյ Բագրատյանը հակադարձեց Ալեն Սիմոնյանի իրեն արած դիտողությանը



*ԱԺ երեկվա նիստում կառավարության կողմից ներկայացված «Մաքսային կարգավորման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը առաջին ընթերցմամբ ընդունելու մասին» քննարկման ժամանակ ՔՊ-ական պատգամավոր Սերգեյ Բագրատյանը հիմնական զեկուցողին հարց տալու համար մի փոքր ուշ սեղմեց հերթագրման կոճակը, բայց տեղավորվեց սահմանված ժամանակում: ԱԺ խոսնակ Ալեն Սիմոնյանը նեղսրտեց, որ պատգամավորը շուտ չի սեղմել կոճակը, ինչին նրա թիմակից պատգամավորը հակադարձեց. «Ես այս հարցը չէի տա, բայց հատուկ տվել եմ, որովհետև տեսնում եմ՝ դուք շտապում եք, որ շուտ քվեարկենք: Մենք այստեղ եկել ենք, որ աշխատենք: Ժողովուրդ ջան, լիքը լուրջ հարցեր կան: Դուք ուզում եք ո՞ւր էթաք՝ կոխըցրած շուտ-շուտ քվեարկենք, հարց մի տվեք, սուս, ձեն չհանեք: Չի կարելի ժողովուրդ ջան: Մենք աշխատավարձ ենք ստանում և բարձր աշխատավարձ ենք ստանում: Եվ պետք է մեր հարցերով պարզաբանենք այս օրենքները: Հիմա մենք օրենք ենք ընդունում: Առավոտյան հարցրեք. եթե մի քաղաքացի իմանա ինչի մասին է, ես ականջներս կկտրեմ: Բա ինչի՞ ենք եկել: Եկել ենք պարզաբանենք, մարդիկ իմանան ինչ ենք քննարկում, ինչի ենք հավաքվել: Եթե շտապում ենք, ժողովուրդ ջան, եկեք սենց պայմանավորվենք: Նախագիծը բերեք, ոչ էլ զեկուցեք, քվեարկենք, գնա: Պրոբլեմ կա, շատ պրոբլեմներ ունենք մեր տնտեսության մեջ: Եկեք աշխատենք: Ով շտապում է, թող գնա՝ մենք մնանք աշխատենք»:*

ԱՐՈՍ ՀԱԿՈԲՅԱՆ

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### «Խաղաղության պայմանագրում մեկ հոդված ընդհանրապես համաձայնեցված չէ». Փաշինյան

*«Մենք ասել ենք, որ խաղաղության պայմանագրի նախագծում կա 13 հոդված, որոնք ամբողջությամբ համաձայնեցված են, նախաբանն ամբողջությամբ համաձայնեցված է, թղթի վերնագիրն ամբողջությամբ համաձայնեցված է: Եվս 3 հոդված մասնակի է համաձայնեցված, այսինքն՝ հոդվածում կա նախադասություն, որ համաձայնեցված է, կա նախադասություն, որ համաձայնեցված չէ: Կա նաև մեկ հոդված, որն ընդհանրապես համաձայնեցված չէ»,-* երեկ ԱԺ-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ ասաց վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նա հավելեց. *«Հիմա մենք ասում ենք՝ այն, ինչ համաձայնեցված է, այդ համաձայնեցվածը, ըստ էության, անդրադառնում է անկյունաքարային բովանդակությանը և երկու պետությունների հարաբերության հիմնարար սկզբունքներին: Եկեք դա ստորագրենք և շարունակենք այլ հարցերի վերաբերյալ քննարկումը: Ադրբեջանական կողմն ասում է՝ չէ, կարևոր հարցեր կան, որոնք պետք է արտահայտվեն»:*

Կարդացեք նաև էջ 3:

### «Երեւի Ալեն Սիմոնյանն այնքան էլ ուշադիր չի հետեւել Նիկոլ Վովաեւիչի ասուլիսին». Զախարովա

*«Երեւի Ալեն Սիմոնյանն այնքան էլ ուշադիր չի հետեւել Նիկոլ Վովաեւիչի ասուլիսին»,-* ըստ Sputnik Արմենիայի, ասել է Մարիա Զախարովան՝ մեկնաբանելով ԱԺ նախագահի հայտարարությունը, թե ՀՀ իշխանությունները պետք է մտածեն Թուրքիայի և Իրանի հետ սահմանին ռուս սահմանապահներ տեղակայելու մասին: 1992թ. բազային զորքերի կարգավիճակի մասին պայմանագիրն է, որն անժամկետ է: *«ՌԴ սահմանապահները բազմիցս ապացուցել են իրենց ներկայության կարևորությունը: Արդյունավետ փոխգործակցություն է հաստատվել այս ուղղությամբ, ինչը, ըստ երևույթին, նյարդայնացնում է Երևանի որոշ քաղաքական գործիչների: Պետք է հաշվի առնել, թե ինչպես կանդրադառնա սահմանի բացահայտումը երկրի անվտանգության վրա տարածաշրջանում ամբողջական կարգավորման բացակայության պայմաններում: Ինձ թվում է՝ մարդիկ, ովքեր փորձագետ չեն, պետք է խոսքը տան նրանց, ովքեր իրենց կյանքն են դնում այդ ամենում»:*

### «Ռուսաստանը հավատարիմ է Զանգեզուրի շուրջ Իրանի հետ նախկին պայմանավորվածություններին». Շոյգու

Մոսկվան հավատարիմ է Զանգեզուրի շուրջ Թեհրանի հետ նախկին պայմանավորվածություններին, հայտարարել է Ռուսաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Սերգեյ Շոյգուն Իրանի իր գործընկերոջ՝ Ալի Աքբար Ահմադիանի հետ հանդիպման ժամանակ: *«Ռուսաստանը հավատարիմ է Զանգեզուրի հետ կապված Թեհրանի հետ նախկին պայմանավորվածություններին, և Մոսկվայի քաղաքականությունն այս հարցում բացարձակապես չի փոխվել»,* - ըստ «Ազատության», ասել է Շոյգուն:

